

Իր 25-ամյակի կապակցությամբ Հայկական Ծրագրեր ընկերությունը սկսում է «Աջակցում Հայաստանի փոքր բիզնեսին» ծրագիրը: Որպես առաջին միջոցառում, Հայկական Ծրագրերը նվեր է մատուցում բոլոր հաշվապահներին՝ նրանց անվճար տրամադրելով **ՀԾ-Հաշվետար 2012** հաշվապահական համակարգը:

Մենք հաշվապահի խնդիրները գիտենք ամբողջ խորությամբ և մեր մասնագիտությունը դրանց լավագույն լուծումներ տալն է: Արդեն 25 տարի մեր համակարգերը զարգանում և հղկվում են: Այսօր դրանք ամենատարածվածն են Հայաստանի խոշոր և միջին հաշվապահական համակարգերի շուկայում: Հայկական Ծրագրեր ընկերության ուշադրության կենտրոնում մշտապես եղել են նաև փոքր կազմակերպությունների հաշվապահական խնդիրները:

ՀԾ-Հաշվետար 2012 համակարգը մշակվել է հատուկ փոքր կազմակերպությունների համար և իր մեջ ներառում է այն հիմնական առանձնահատկությունները, որոնք կարևոր են այդ հիմնարկների հաշվապահների համար:

ՀԾ-Հաշվետար 2012-ը

- ✓ Հեշտ է տեղադրվում ու շահագործվում
- ✓ Չի պահանջում հատուկ ուսուցում և ծավալուն ներդրման աշխատանքներ
- ✓ Կատարում է հաշվապահության հիմնական գործողությունները և չի ներառում օգտագործումը դժվարացնող բարդ գործիքներ
- ✓ Թույլ է տալիս ձևավորել հաճախ օգտագործվող սկզբնական փաստաթղթեր
- ✓ Լրացնում է ֆինանսական, հարկային և ներքին օգտագործման համար հաշվետվություններ
- ✓ Վարում է բազմաթուփային հաշվառում
- ✓ Սերտ ինտեգրացված է ՀԾ-ԻնտերնետԲանկ համակարգի հետ, ինչի շնորհիվ հնարավոր է առանց բանկ այցելելու կատարել բանկային գործարքներ
- ✓ Հնարավորություն է տալիս տվյալներն արտահանել MS-Word և MS-Excel